ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 102

ԳԱԳԻԿ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, 43-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշումով, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, Գագիկ Քալանթարյանի դիմումը սեփականության իրավունքը ձևակերպելու մասին, հիմք ընդունելով անշարժ գույքի համար "ՏԻԳՐԱՆ ՍԵՐՈԲՅԱՆ ԼԵՎՈՆԻ" ԱՁ-ի /որակավորման վկայական՝ 0189 2012-04-28, ծածկագիր 2024SZLP8Q/ կողմից կազմված հատակագիծը և, քանի որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում՝ չի առաջացնում սերվիտուտ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Գագիկ Քալանթարյանին հատկացված Լերմոնտովո համայնքի 06-043-0114-0002 ծածկագրով 0.061587հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ ԱԳԿՊԿ-ի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 103

ՊԱՎԵԼ ՖԵԴՈՐՈՎԻՉ ԱՍԱԴՈՎԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42 և 43 հոդվածներով, ՀՀ ՔՕ 188 հոդվածով, ՀՀ ՀՕ 60 հոդվածով, ՀՀ կառավարության 18.05.2006 թ-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387 որոշումով, հիմք ընդունելովանշարժ գույքի համար "ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ" ԱՁ-ի /որակավորման վկայական՝ 0332 2014-05-14, ծածկագիր 20249ZP6A4/ կողմից կազմված հատակագիծը, ըստ ժառանգության իրավունքի վկայականի /գրանցամատյանի թիվ 1767, 1768/՝ ժառանգական գործի համար 88/24

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 06-043-0008-0002 ծածկագրի տակ գտնվող 0,198686հա հողամասում կառուցված. բնակելի տուն՝ 48,92քմ, ավտոտնակ, ծածկարան՝ 60,87քմ, սանհանգույց՝ 10,37քմ արտաքին մակերեսով, պարիսպ՝ 0,9քմ մակերեսով և թիվ 1 շինության ներսում կատարված 11 ձևափոխումներ; ինքնակամ կառուցված անշարժ գույքը և ճանաչել Պավել Ֆեդորովիչ Ասադովի սեփականության իրավունքը:

2.Վերը նշված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Ինքնակամ կառույցի օրինականացման համար 128 560 ՀՀ դրամ և շինության ներսում 11 ձևափոխումների համար 11 310 ՀՀ դրամ՝ ընդհանուր՝ 139 870 ՀՀ դրամ 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում ՀՀ ՀՕ 60 հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5.Անշարժ գույքի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

6.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**